ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

"ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. "Շահութահարկի մասին" Հայաստանի Հանրապետության 1997 թվականի սեպտեմբերի 30-ի ՀՕ-155 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը "կանոնների" բառերից հետո լրացնել ", օգտագործվող հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի մասին" բառերով.

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով՝

"Սույն օրենքի կիրառման առումով օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքներ են համարվում ակտիվների և (կամ) պարտավորությունների վերագնահատման արդյունքները, եթե վերագնահատումը կատարվել է այն օրենքին համապատասխան, որտեղ ուղղակիորեն նշված է, որ ակտիվների և (կամ) պարտավորությունների վերագնահատումը իրականացվում է հարկվող շահույթի կամ շահութահարկի հաշվարկման նպատակով)։"։

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի՝

ա. "ժզ" ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

"**ժզ)** Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նախկինում դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերի մարման գումարները կամ դուրս չգրված դեբիտորական պարտքերի մարման դեպքում՝ սահմանված կարգով պահուստին կատարված մասհանումների գումարները, իսկ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով նախկինում հաշվեկշռից դուրս գրված անհուսալի ակտիվների և ինվեստիցիոն արժեթղթերի՝ հաշվեկշռում վերականգնման արդյունքում հաշվեգրված եկամուտները, իսկ

հաշվեկշռից դուրս չգրված ակտիվների դեպքում՝ սահմանված կարգով ձևավորված պահուստների նվազեցման գծով հաշվեգրված եկամուտները.”.

բ. “ժէ” ենթակետը ուժը կորցրած ճանաչել.

գ. “իա” ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

“**իա)** ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստների, տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի գծով ճանաչվող եկամուտները.”.

դ. “իբ” ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

“**իբ)** վերաապահովագրության փոխանցված պայմանագրերից ապահովագրական ընկերությունների ստացվող կոմիսիոն վարձատրությունները.”.

ե. լրացնել հետևյալ բովանդակությամբ “իդ” և “իե” ենթակետերով՝

“**իդ)** գույքագրման (այդ թվում՝ ստուգման) ժամանակ բացահայտված հիմնական միջոցների, ապրանքանյութական արժեքների, դրամական միջոցների և այլ գույքի ավելցուկը, իսկ ռեզիդենտի կողմից տիրազուրկ գույքի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով (բացառությամբ՝ դատարանի որոշումների հիման վրա) իր իրավունքների ճանաչման դեպքում՝ տիրազուրկ գույքը: Գույքի ավելցուկը, տիրազուրկ գույքը գնահատվում է տվյալ ռեզիդենտի մոտ առկա համանման արժեքով, իսկ այդ արժեքի բացակայության դեպքում՝ փորձաքննության եղանակով որոշված արժեքով, որը ձևավորում է այդ գույքի սկզբնական (ձեռքբերման) արժեքը և համախառն եկամտի մեջ ներառվում է ամբողջությամբ տվյալ (գույքի ավելցուկի դեպքում՝ ավելցուկի հայտնաբերման, իսկ տիրազուրկ գույքի դեպքում՝ իրավունքների ճանաչման) հաշվետու ժամանակաշրջանում.

իե) համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները (ստացողի մոտ), եթե համատեղ գործունեության մասով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնելու մասին հայտարարություն հարկային մարմին չի ներկայացվել:”.

2) 3-րդ մասը “ցպահանջ” բառից հետո լրացնել “դեբիտորական և” բառերը.

3) լրացնել 4-րդ մասով հետևյալ խմբագրությամբ՝

“**4.** Սահմանված կարգով պետության կամ լիազորված մարմնի կողմից հատատված սակագների կիրառության հետ կապված՝ պետական բյուջեից տրվող սուբսիդիաների դեպքում հարկատուի եկամուտները որոշվում են նշված սակագների կիրառման արդյունքում՝ գնորդներից (սպառողներից) ստացման ենթակա գումարների (իրացումից հասույթի) և պետական բյուջեից փաստացի

ստացված սուբսիդիաների (անհատույց ստացված ակտիվների) հանրագումարի չափով:”:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) 1-ին պաբերությունում “համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները” բառերը փոխարինել “ինչպես նաև համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները (ստացողի մոտ), եթե համատեղ գործունեության մասով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնելու մասին հայտարարություն ներկայացվել է հարկային մարմին” բառերով.

2) 2-րդ պարբերությունում “հիմնական միջոցների” բառերը փոխարինել “ակտիվների” բառերով.

3) 3-րդ պարբերությունից հանել “, ինչպես նաև սահմանված կարգով պետության կամ լիազորված մարմնի կողմից հաստատված սակագների կիրառության հետ կապված՝ պետական բյուջեից տրվող սուբսիդիաները” բառերը:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի “ժը” ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածի “դ” ենթակետում “հիմնական միջոցների” բառերը փոխարինել “ակտիվների” բառերով:

Հոդված 6. Օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

“Հոդված 12. Ամորտիզացիոն մասհանումները

1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է շահագործման մեջ գտնվող և մաշվածքի ենթակա սեփականության իրավունքով հարկատուին պատկանող կամ երկարաժամկետ վարձակալությամբ (կամ ֆինանսական լիզինգով) վերցված ոչ ընթացիկ ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների) ամորտիզացիոն մասհանումների գումարի չափով՝ սույն հոդվածի 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերով սահմանված կարգով: Շահագործման մեջ չգտնվող ոչ ընթացիկ ակտիվների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումները համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն:

2. Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարը հաշվարկվում է՝ ելնելով հիմնական միջոցների տվյալ խմբի համար սահմանված ամորտիզացիոն տարեկան առավելագույն տոկոսադրույքից՝

Հիմնական միջոցների խումբ	Տարեկան առավելագույն տոկոսադրույք
ա) հյուրանոցներ, պանսիոնատներ, հանգստյան տներ, առողջարաններ, կրթական և ուսումնական հաստատությունների շենքեր և շինություններ	10%
բ) այլ շենքեր և շինություններ, փոխանցող հարմարանքներ	5%
գ) հոսքային գծեր և ռոբոտատեխնիկա	33.33%
դ) հաշվողական և համակարգչային տեխնիկա	100%
ե) այլ հիմնական միջոցներ (այդ թվում՝ բանող անասուններ, բազմամյա տնկիներ և հողերի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումներ)	20%

Աղեսի գոտում գտնվող՝ սույն մասի "ա" և "բ" ենթակետերում նշված հիմնական միջոցների խմբի ամորտիզացիոն առավելագույն տոկոսադրույքը սահմանվում է տարեկան 100%: Սույն մասում նշված՝ աղեսի գոտու տարածքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գյումրի քաղաքում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար Գյումրի քաղաքում գտնվող՝ սույն մասի "ա", "բ" և "գ" ենթակետերում նշված հիմնական միջոցների և Գյումրի քաղաքում տեղակայված՝ սույն մասի "ե" ենթակետում նշված հիմնական միջոցների խմբի ամորտիզացիոն առավելագույն տոկոսադրույքը սահմանվում է տարեկան 100% Գյումրի քաղաքում գտնվելու (տեղակայվելու) ժամանակաշրջանում: Եթե Գյումրի քաղաքում գտնվող (տեղակայված) հիմնական միջոցների խմբերի նկատմամբ կիրառվել է նշված ամորտիզացիոն առավելագույն տոկոսադրույքը, և այդ հիմնական միջոցների խմբում ներառված հիմնական միջոցները տեղափոխվել են Գյումրի քաղաքից դուրս (առանց այլ անձանց օտարման), ապա հարկատուն պետք է վճարի արագացված ամորտիզացիայից օգտված լինելու հետևանքով պակաս վճարված շահութահարկը և շահութահարկը (այդ թվում՝ կանխավճարները) ուշ վճարելու համար սահմանված տույժերը:

Եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ավարտին տվյալ խմբի հիմնական միջոցների հաշվեկշռային (մնացորդային) արժեքների հանրագումարը չի գերազանցում 50,0 հազ. դրամը, ապա այդ հաշվետու ժամանակաշրջանի

համար հիմնական միջոցների տվյալ խմբի ամորտիզացիոն առավելագույն տոկոսադրույքը սահմանվում է տարեկան 100%:

3. Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն տոկոսադրույքը որոշում է հարկատուն՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջիններիս որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն առավելագույն տոկոսադրույքը սահմանվում է տարեկան 10% (բայց ոչ պակաս հարկատուի գործունեության ժամկետից ելնելով հաշվարկված տոկոսադրույքից, որը այդ ժամկետում բաշխվում է հավասարաչափ):

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափանիշների համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից որպես կոնցեսիայի պայմանագրեր որակված՝ ծառայությունների մատուցման կոնցեսիոն համաձայնությունների շրջանակներում կոնցեդենտից (շնորհատուից) հանրային ծառայությունների ենթակառուցվածքների (այդ թվում՝ կոնցեսիոների (օպերատորի) կողմից կոնցեդենտին պատկանող ենթակառուցվածքային ակտիվների, դրանց առանձին տարրերի վրա կատարված բարելավման արդյունքի կամ գնված կամ կառուցված ու սեփականության իրավունքով կոնցեդենտին հանձնված ենթակառուցվածքային ակտիվների (նյութական կամ ոչ նյութական), դրանց կազմում առանձին տարրերի) շահագործման իրավունքը կոնցեսիոների մոտ շահութահարկով հարկման նպատակով հաշվառվում է որպես ոչ նյութական ակտիվների առանձին խումբ, որի գծով ամորտիզացիոն մասհանումները, սույն օրենքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում, կատարվում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

4. Հարկվող շահույթը որոշելու նպատակով հարկատուն իր հայեցողությամբ կարող է ընտրել հիմնական միջոցների խմբի ամորտիզացիոն տարեկան այլ տոկոսադրույք, որը չի կարող գերազանցել հիմնական միջոցների տվյալ խմբի համար սույն հոդվածով սահմանված առավելագույն ամորտիզացիոն դրույքաչափը:

5. Ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է ըստ ոչ ընթացիկ ակտիվների խմբերի՝ որպես տվյալ խմբի ոչ ընթացիկ ակտիվների՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ավարտին հաշվեկշռային (մնացորդային) արժեքների հանրագումարի և սույն հոդվածի 2-րդ, 3-րդ կամ 4-րդ մասերում տվյալ խմբի ոչ ընթացիկ ակտիվների համար սահմանված ամորտիզացիոն տարեկան տոկոսադրույքի արտադրյալ: Տարվա ընթացքում ձեռք բերված ոչ ընթացիկ ակտիվի սկզբնական (ձեռքբերման) արժեքը գումարվում է ոչ ընթացիկ ակտիվի տվյալ խմբի հաշվեկշռային (մնացորդային) արժեքին, իսկ

օտարված ոչ ընթացիկ ակտիվի հաշվեկշռային (մնացորդային) արժեքը հանվում է ոչ ընթացիկ ակտիվի տվյալ խմբի հաշվեկշռային (մնացորդային) արժեքից:

Հոդված 13. Հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը, հիմնական միջոցների սպասարկման ծախսերը

1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է՝

1) սեփականության իրավունքով հարկատուին պատկանող կամ վարձակալությամբ (այդ թվում՝ լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով.

2) սեփականության իրավունքով հարկատուին պատկանող կամ վարձակալությամբ (այդ թվում՝ լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերի չափով.

3) սեփականության իրավունքով հարկատուին պատկանող կամ վարձակալությամբ (այդ թվում՝ լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների սպասարկման ծախսերի չափով:

2. Հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ավելացվում են այն հիմնական միջոցի խմբի հաշվեկշռային (մնացորդային) արժեքին, որի վրա այդ ծախսերը կատարվել են, և՝

1) եթե այդ ծախսերը չեն գերազանցում հիմնական միջոցի խմբի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքը, ապա ամորտիզացվում են սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով.

2) եթե այդ ծախսերը գերազանցում են հիմնական միջոցի խմբի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքը, ապա ամորտիզացվում են սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ ավելի, քան տարեկան 20 տոկոսով: Եթե հիմնական միջոցի խմբի ամորտիզացիոն առավելագույն տոկոսադրույքը սահմանված է 20 տոկոսից ավել, ապա այդ հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ամորտիզացվում են այդ հիմնական միջոցի խմբի համար սահմանված ամորտիզացիոն առավելագույն տոկոսադրույքով:

3. Վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը վարձակալը ամորտիզացնում է սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով: Վարձակալական պայմանագրի լուծման և փաստացի դադարեցման դեպքում չամորտիզացված մնացորդն չի նվազեցվում վարձակալի համախառն եկամտից:

4. Սույն օրենքի իմաստով՝ հիմնական միջոցների (այդ թվում՝ վարձակալված) վրա կատարված ծախսերի տարբերակումն ըստ ընթացիկ և կապիտալ ծախսերի, ինչպես նաև հիմնական միջոցների (այդ թվում՝ վարձակալված) սպասարկման ծախսերի կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հայտանիշների և (կամ) չափերի հիման վրա:”:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. “ա” ենթակետը “վճարները” բառից հետո լրացնել “, ինչպես նաև ձեռքբերված վառելիքի (բենզին, դիզելային վառելիք, հեղուկ և բնական գազ) համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշված չափերը գերազանցող ծախսերը” բառերը.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ “ժե” և “ժզ” ենթակետերով՝

“ժե) վերցված (ներգրավված) վարկերի կամ փոխառությունների գումարների նկատմամբ հաշվարկվող տոկոսները, եթե դրանք անտոկոս տրամադրվում են այլ անձանց, կամ վարձակալությամբ վերցված ոչ ընթացիկ ակտիվների գծով հաշվարկվող վարձավճարները, եթե դրանք անհատույց օգտագործմամբ տրամադրվում են այլ անձանց.

ժզ) վերցված (ներգրավված) վարկերի կամ փոխառությունների գումարների նկատմամբ հաշվարկվող տոկոսների այն մասը, որը գերազանցում է այդ միջոցների հաշվին այլ անձանց տրամադրված վարկերի կամ փոխառությունների գումարների նկատմամբ հաշվարկվող տոկոսներին, կամ վարձակալությամբ վերցված ոչ ընթացիկ ակտիվների գծով հաշվարկվող վարձավճարների այն մասը, որը գերազանցում է այդ ոչ ընթացիկ ակտիվների այլ անձանց ենթավարձակալության դիմաց ստացվող եկամուտներին:”.

2) 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասում “ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների” բառերը փոխարինել “ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց” բառերով:

Հոդված 9. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի “գ” ենթակետում “Եկամտահարկի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածի 1-ին մասի “ա” ենթակետի համաձայն հաշվարկված և վճարված եկամտահարկի” բառերը փոխարինել “Եկամտային հարկի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի

10-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն հաշվարկված և վճարված եկամտային հարկի” բառերով:

Հոդված 10. ՈՒժը կորցրած ճանաչել Օրենքի 20-րդ հոդվածը:

Հոդված 11. Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով՝

“Սույն հոդվածի դրույթները կիրառվում են նաև դատարանի որոշումների հիման վրա տիրազուրկ ճանաչված ակտիվի մուտքագրման (սեփականության իրավունքի ճանաչման) դեպքերում:”:

Հոդված 12. Օրենքի 30-րդ հոդվածի՝

1) վերնագրում “ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների” բառերը փոխարինել “ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց” բառերով.

2) “ա” ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

“**ա)** բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց ակտիվների և (կամ) ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարների չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով.”:

Հոդված 13. Օրենքի 31-րդ հոդվածի՝

1) “դ” ենթակետը ուժը կորցրած ճանաչել.

3) “ե” ենթակետում “վճարված” բառը փոխարինել “վճարվող” բառով.

4) “թ” ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

“**թ)** ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստների, տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի գծով ճանաչված ծախսերի չափով:”:

Հոդված 14. Օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասը “որին դրանք վերաբերում են” բառերից հետո լրացնել “, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված այն դեպքերի, երբ դրանք ներառվում են ակտիվի սկզբնական (ձեռքբերման) արժեքի մեջ” բառերով:

Հոդված 15. Օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

"Հոդված 33. Ռեզիդենտների շահութահարկի դրույքաչափերը

1. Բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված դեպքերի, շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 26 տոկոս դրույքաչափով:

2. Հաշվետու ժամանակաշրջանի հարկվող շահույթը 500,0 մլն. դրամը գերազանցելու դեպքում, 500,0 մլն. դրամը գերազանցող հարկվող շահույթի նկատմամբ կիրառվում է լրացուցիչ 5 տոկոս դրույքաչափը:

3. Ներդրումային ֆոնդերի համար շահութահարկի գումարը հաշվարկվում է զուտ ակտիվների նկատմամբ 0.01% դրույքաչափով:

Հոդված 34. Շահութահարկին փոխարինող վճարները

Առանձին վճարողների, նրանց խմբերի, գործունեության տեսակների համար օրենքով կարող են սահմանվել շահութահարկին փոխարինող շրջանառության հարկեր, հաստատագրված վճարներ կամ արտոնագրային վճարներ:":

Հոդված 16. Օրենքը լրացնել 39.3-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝

"Հոդված 39.3. Խոշոր ներդրումներով ռեզիդենտների արտոնությունները

1. 2013 և 2014 թվականների ընթացքում խոշոր ներդրումներով ընկերություն համարված (բացառությամբ՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց, ինչպես նաև վերակազմակերպված կազմակերպությունների) ռեզիդենտների խոշոր ներդրումներով ընկերություն համարվելու հաշվետու տարվա և դրան հաջորդող երկու տարիների շահութահարկի գումարը նվազեցվում է խոշոր ներդրումներով ընկերություն համարվելու տարում ստեղծված նոր աշխատատեղերի մասով հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների 100 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հաշվարկված փաստացի շահութահարկի 30 տոկոսը, եթե այդ տարիների արդյունքներով ստացված ֆինանսական շահույթը մինչև տվյալ հաշվետու տարիների համար շահութահարկի հաշվարկների ներկայացումը հարկային մարմիններին ամբողջությամբ ուղղվել է ռեզիդենտի գործունեությանը:

2. Սույն հոդվածի կիրառման իմաստով՝

1) խոշոր ներդրումներով ընկերություն է համարվում այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը որի 2013 և 2014 թվականների կանոնադրական կապիտալը ավելացել է (այսինքն՝ այդ տարիներին կանոնադրության մեջ գրանցվել է և այդ տարիներին փաստացի վճարվել է) առնվազն 300,0 մլն. դրամով, իսկ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած) առևտրային կազմակերպությունները համարվում են խոշոր նաև ստեղծման պահից, եթե կանոնադրական կապիտալը ի սկբանե հայտարարվել և համալրվել է առնվազն 300,0 մլն. դրամով: Ընդ որում, գույքային ներդրումները ենթակա են պետական գրանցման և (կամ) նոտարական վավերացման և (կամ) անկախ փորձագիտական եզրակացության՝ օրենքով սահմանված կարգով, իսկ ոչ նյութական ակտիվներով ներդրումները հաշվի չեն առնվում.

2) նոր աշխատատեղեր են համարվում խոշոր ներդրումներով ընկերություն համարվելու տարիներում նախորդի համեմատ աշխատանքի ընդունված և աշխատանքից ազատված վարձու աշխատողների դրական տարբերությունը, որոնց մասով ավելացվել է նաև աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները: Նոր աշխատատեղերին հմապատասխանող աշխատավարձի և դան հավսարեցված վճարումների հաշվարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Ռեզիդենտը պետք է վճարի արտոնությունից օգտված լինելու հետևանքով պակաս վճարված շահութահարկը և շահութահարկը (այդ թվում՝ կանխավճարները) ուշ վճարելու համար սահմանված տույժերը, եթե՝

1) ստեղծման տարվանից 6 տարվա ընթացքում ռեզիդենտը որևէ պահին դադարել է համարվել խոշոր կամ լուծավել է, *կամ*՝

2) արտոնությունից օգտվելուց հետո ռեզիդենտի կողմից կատարվում է արտոնությունից օգտվելու հաշվետու ժամանակաշրջանների համար ֆինանսական շահույթի վերաբաշխում, որի հետևանքով փոխվում է ռեզիդենտի գործունեությանը ուղղվող բաշխված շահույթի տեսակարար կշիռը ընդհանուր ֆինանսական շահույթի մեջ, *կամ*՝

3) խոշոր ներդրումից հետո 6 տարվա ընթացքում ռեզիդենտի համալրված կանոնադրական կապիտալի որևէ գումար տրամադրվել է հիմնադիրներին (մասնակիցներին) փոխառության, վարկի կամ որևէ այլ ձևով:”:

Հոդված 17. Օրենքի 46-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

“Հոդված 46. Շահութահարկի հաշվարկների ներկայացումը

Շահութահարկ վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ մինչև հաշվետու

տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը, ներկայացնում են սահմանված կարգով հարկային մարմնի կողմից հաստատված շահութահարկի հաշվարկ:”:

Հոդված 18. Օրենքի 47-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի երկրորդ պարբերությունում “պարզեցված հարկի և (կամ) հաստատագրված վճարի” բառերը փոխարինել “շրջանառության հարկի, հաստատագրված վճարի և (կամ) արտոնագրային վճարի” բառերով.

2) 3-րդ և 4-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել.

3) 6-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

“Այն հարկատուն, որը հարկային մարմնին ներկայացրել է գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն, կարող է նշյալ հայտարարությունը ներկայացնելուց հետո շահութահարկի կանխավճարներ չկատարել:”:

Հոդված 19. Օրենքի 47^1-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 20. Օրենքի 51-րդ հոդվածի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

“Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված շահութահարկի հաշվարկներում հարկատուի կողմից սխալներ հայտնաբերվելու դեպքում հարկատուն կարող է հարկային տեսչության մարմիններին օենքով սահմանված դեպքերում ներկայացնել ճշտված հաշվարկ, որի հիման վրա օրենքով սահմանված կարգով կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ:”:

Հոդված 21. Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի “գ” ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

“**գ)** ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ այլ ոչ ռեզիդենտի Հայաստանի Հանրապետությունում հաշվառված ստորաբաժանումից ստացած այլ եկամուտները:“:

Հոդված 22. Օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասը “գործունեությունից” բառից հետո լրացնել “(բացառությամբ՝ օֆշորային գոտիներում գրանցված (հաշվառված) կազմակերպություններից ապրանքների կամ հիմնական միջոցների ձեռքբերումների)” բառերը:

Հոդված 23. Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) աղյուսակը լրացնել նոր տողով հետևյալ բովանդակությամբ՝

"խորհրդատվական ծառայությունների դիմաց ստացված եկամուտներ	20".

2) վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

"Հարկ վճարողների կողմից օֆշորային գոտիներում գրանցված (հաշվառված) կազմակերպություններից ապրանքների կամ հիմնական միջոցների ձեռքբերման համար այդ գոտիներում գրանցված (հաշվառված) կազմակերպություններին կատարված վճարումներից շահութահարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով: Օֆշորային գոտիների (երկրների) ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:":

Հոդված 24. Օրենքի 64-րդ հոդվածը "վճարվող" բառից հետո լրացնել "(ներառյալ՝ կանխիկ կամ անկանխիկ փողային վճարման, այլ գույքով, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվանցման, պարտքերի վերածնակերպման կամ պարտքերի նորացման, ինչպես նաև հայաստանյան աղբյուրներից ստացման ենթակա եկամուտների մասով հարկային գործակալի նկատմամբ ոչ ռեզիդենտի կողմից հարկային գործակալ չհանդիսացող անձին պահանջի իրավունքի զիջման դեպքերում)" բառերով:

Հոդված 25. Օրենքի 69-րդ հոդվածի՝

1) երկրորդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել.

2) երրորդ պարբերության երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

"Ռեզիդենտները նշված տուգանքը պետական բյուջե են վճարում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:":

Հոդված 26. Օրենքի 71-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

"**Հոդված 71. Օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը**

Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, իսկ տնտեսական և այլ առևտրային

գործունեության տեսակների, ապրանքների բնորոշումների հետ կապված հարցերը նաև՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության հետ:”:

Հոդված 27. Օրենքի 72-րդ հոդվածի 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 28. Սույն օրենքն ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի դրույթները վերաբերվում են նաև 2012 թվականի համար ներկայացվող շահութահարկի հաշվարկներին:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածում նշված ամորտիզացիոն մասհանումների չափը վերաբերվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերված ոչ ընթացիկ ակտիվներին: 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա ոչ ընթացիկ ակտիվների համար 2013 թվականի հունվարի 1-ից հետո ամորտիզացիոն մնացորդային առավելագույն տոկոսադրույքը որոշելիս դրանք խմբավորվում են ըստ ոչ ընթացիկ ակտիվների խմբերի և յուրաքանչյուր ոչ ընթացիկ խմբի համար առանձին հաշվարկվում է միջին կշռված ամորտիզացիոն մնացորդային առավելագույն տոկոսադրույքը հետևյալ բանաձևով.

$$ՄՏ = (ՄԱ_1 x ՄՏ_1 + ՄԱ_2 x ՄՏ_2 + … + ՄԱ_n x ՄՏ_n) / (ՄԱ_1 + ՄԱ_2 + … + ՄԱ_n)$$

որտեղ՝ **ՄՏ** – ոչ ընթացիկ ակտիվների տվյալ խմբի ամորտիզացիոն մնացորդային առավելագույն տոկոսադրույքն է, **ՄԱ$_i$** – տվյալ խմբին պատկանող յուրաքանչյուր i-րդ ոչ ընթացիկ ակտիվի հաշվեկշռային (մնացորդային) արժեքն է 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ, իսկ **ՄՏ$_i$** – տվյալ խմբին պատկանող յուրաքանչյուր i-րդ ոչ ընթացիկ ակտիվի ամորտիզացիոն մնացորդային առավելագույն տոկոսադրույքն է, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ՄՏ_i = ԱՏ_i \ x \ (ՄԱ_i/ՄԱ_i)$$

որտեղ՝ **ՄՏ$_i$** – տվյալ խմբի (որին պատկանում է i-րդ ոչ ընթացիկ ակտիվը) մնացորդային տոկոսադրույքն է, **ԱՏ$_i$** – տվյալ խմբի (որին պատկանում է i-րդ ոչ ընթացիկ ակտիվը) ամորտիզացիոն առավելագույն տոկոսադրույքն է, **ՍԱ$_i$** – տվյալ խմբի i-րդ ոչ ընթացիկ ակտիվի սկզբնական (ձեռքբերման) արժեքն է (օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում՝ վերագնահատված արժեքն է), **ՄԱ$_i$** – տվյալ խմբի i-րդ ոչ ընթացիկ ակտիվի հաշվեկշռային (մնացորդային) արժեքն է 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ: Հարկվող շահույթը որոշելու նպատակով հարկատուն իր հայեցողությամբ կարող է ընտրել հիմնական միջոցների խմբի ամորտիզացիոն

տարեկան այլ տոկոսադրույք, որը չի կարող գերազանցել հիմնական միջոցների տվյալ խմբի համար սույն մասով սահմանված առավելագույն ամորտիզացիոն դրույքաչափը:

4. 2013 թվականի ընթացքում ռեզիդենտների կողմից կատարվող շահութահարկի եռամսյակային կանխավճարների գումարները ավելացվում են 30 տոկոսով, եթե 2012 թվականի տարեկան արդյունքներով հարկվող շահույթը չի գերազանցվել 500,0 մլն. դրամը, իսկ հարկվող շահույթը 500,0 մլն. դրամը գերազանցած ռեզիդենտներինը՝ 50 տոկոսով:

5. Սույն օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարությունը հարկային մարմին է ներկայացվել մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը:

6. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ վճարված և փաստացի շահութահարկից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները հաշվանցվում են 2013 թվականից սկսած հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող ռեզիդենտի փաստացի շահութահարկի գումարներից մինչև 2013 թվականի հունվարի 1-ը գործող օրենքով սահմանված կարգով: